Ալեքսանդր Շիրվանզադե

Արմենուհի

Արարված երկրորդ

Տեսարանը ներկայացնում է Ալադյանների ամառանոցը: Մի գեղեցիկ պարտեզ: Աջ կողմը ամառանոցի լայն և երկայն պատշգամբ է երեք-չորս աստիճան սանդուղքով դեպի պարտեզ: Խորքը երկաթյա ցանկապատ է, որի մեջտեղում, բեմի կենտրոնի ուղղությամբ, մի դռնակ: Ձախ կողմը ներկայացնում է վարդի թփերի և ուրիշ ծաղիկների շարք, որ նշանակում է, թե պարտեզը շարունակվում է: Թփերի մեջտեղում մի փոքրիկ շատրվան: Բեմի խորքում, աջ անկյունում, մի համակ է կապած, որի վրա գցած է մի մեծ գույնզգույն ասվյա վերմակ, որպիսին գործ են ածում կառքի համար, մի անկազմ գիրք և մի քանի լրագիրներ: Խորքի ցանկապատի հետևը փողոց է, հետո կանաչազարդ դաշտ, այնուհետև անտառ, անտառազարդ լեռներ, ժայռեր, ձորեր, հեռու ձյունապատ գագաթներ:

Բեմի կենտրոնում, մի քիչ դեպի ձախ, դրած է ճաշի սեղան, ծածկված ձյունափայլ սփռոցով: Սեղանի մի անկյունում դրած են իրար վրա ափսեներ:

ՏԵՍԻԼ 1

ՄԵԼԱՆԻԱ և ԳԱՐԵԳԻՆ

ԳԱՐԵԳԻՆ. (Վարագույրը բարձրանալիս պատշգամբից իջնում է ձեռքին ափսեներ,

դանակ, պատառաքաղներ և այլն: Սկսում է դարսել սեղանի վրա: Շատ մաքուր հագնված երիտասարդ է, սափրած երեսով և բավական կիրթ ձևերով): Մելանիա, ես սեղանը կամաց-կամաց պատրաստում եմ:

ՄԵԼԱՆԻԱ. (Կանգնած է բեմի ձախ անկյունում և նայում է հեռու, դեպի ձախ: Թեթև ամառային մաքուր հագուստով երիտասարդ կին է, գլուխը բաց: Առանց Գարեգինի կողմը նայելու): Լավ ես անում: (Մի փոքր ժամանակ լռության):

ԳԱՐԵԳԻՆ. (ԻՐ գործով զբաղված): Այդ ո՞ւր ես նայում:

ՄԵԼԱՆԻԱ. Ժայռերին:

ԳԱՐԵԳԻՆ. (Առանց իր գործն ընդհատելու): Գրազ կգամ, որ սարի այծն էլի այնտեղ է:

ՄԵԼԱՆԻԱ. (Երեսը դարձնելով Գարեգինին): Մի համարձակվիր անքաղաքավարի խոսել երիտասարդ տիկնոջ մասին: Ես նրան շատ եմ սիրում: (Երեսը դարձյալ դեպի ձախ է դարձնում):

ԳԱՐԵԳԻՆ. Բան ասաց. «Շատ եմ սիրում»: Կարծես, այնպիսի տիկնոջ կարելի է չսիրել: Բայց էլի կասեմ, որ նա սարի այծ է, ամեն օր բարձրանում է քերծերի գլուխը: (Սկսում է հանդարտ երգել): «Յար ուզեցի, չգտա, սերը կերավ իմ սիրտը…»:

ՄԵԼԱՆԻԱ. Ահա նա, սպիտակ շալը գլխին, երկայն փայտը ձեռքում, բարձրանում է...

ԳԱՐԵԳԻՆ. «Գիշերները քուն չունիմ,

«Բայդուշի պես բուն չունիմ:

«Ե՛կ, նազելի, նազելի...»:

ՄԵԼԱՆԻԱ. Նա մի քար վերցրեց, գլորեց ցած, նայում է դեպի ձորը:

ԳԱՐԵԳԻՆ. «Ճամփին ծլած ծաղկի պես,

«Թառամում եմ մեն-մենակ…»:

ՄԵԼԱՆԻԱ. Գնաց հեռացավ, չի երևում: (Մոտենում է սեղանին և սկսում է Գարեգնին օգնել):

ԳԱՐԵԳԻՆ. «Դու ձայն տվիր ճամփորդին,

«Նա չլսեց, հեռացավ...»:

ՄԵԼԱՆԻԱ. Զարմանալի կնիկ է, ինչ ասեմ. սիիում է թափառել անտառներում ու ձորերում: Չի էլ վախենում:

ԳԱՐԵԳԻՆ. Եվ միշտ մենակ, տխուր, մտքերի մեջ թաղված:

ՄԵԼԱՆԻԱ. Ա՛հ, երանի գիտենայի ինչ ցավ ունի: Մի՞թե հարուստներն էլ անբախտ են:

ԳԱՐԵԳԻՆ. «Ի՜նչ եմ անում ոսկե տաշտը, ոիի մեջ արյուն պիտի թքեմ»: Մելանիա, մեր տիկինը բախտավոր չէ, ես գիտեմ: Է՛հ, հիմա պառավ ագռավը կգա: Ես գլուխս փախցրի: (Քայլերն ուղղում է դեպի աջ, որ սանդուղքով բարձրանա, Եղիսաբեթին տեսնելով, կանգ է առնում):

ՏԵՍԻԼ 2

ՆՈՒՅՆՔ և ԵՂԻՍԱԲԵԹ

ԵՂԻՍԱԲԵԹ. (Գալիս է պատշգամբից ձեռքում համարակալ, մատիտ և մի թերթ թուղթ: Նիհար, չոր-չոր, խորշոմած, գոեհիկ դեմքով կին է: Հագած է սև շրջազգեստ, գլխին կապած է սև մետաքսյա թաշկինակ, որի տակից դուրս են ընկած ալեխառն գիսակները: Քայլվածքն ու ձևերը գոռոզ են): Ի՞նչ եք շտապում սեղանը պատրաստել: ՈՒրիշ գործ չունի՞ք: (Գարեգինին): Այն ո՞վ է պարոնիդ մոտ:

ԳԱՐԵԳԻՆ. Չեմ ճանաչում, նոր մարդ է:

ԵՂԻՍԱԲԵԹ. Մի աման էլ ավելացրու, կարելի է Սամսոնը նրան ճաշի պահի:

ԳԱՐԵԳԻՆ. Աչքիս վրա: (Գնում է պատշգամբով, իսկույն ետ է գալիս մի մարդու համար սերվիզ ձեռքում, դնում է սեղանի վրա և հեռանում է պատշգամբով):

ԵՂԻՍԱԲԵԹ. (Նստում է ճաշի սեղանի քով և սկսում է համարակալի վրա հաշիվ անել, նայելով թերթին): Տիկինդ տա՞նն է:

ՄԵԼԱՆԻԱ. Ո՛չ: (Մոտենում է համակին, վերմակը վերցնում է և սկսում է ծալել):

ԵՂԻԱԱԲԵԹ. Այգումն էլ չի երևում:

ՄԵԼԱՆԻԱ. Այնտեղ էր, դուրս եկավ, անցավ գետակի մյուս ափը:

ԵՂԻԱԱԲԵԹ. Մենա՞կ:

ՄԵԼԱՆԻԱ. Այո՛:

ԵՂԻՍԱԲԵԹ. Ինչո՞ւ հետը չգնացիր:

ՄԵԼԱՆԻԱ. Տիկինը բարկանում է, երբ ես հետևում եմ իրան: Ասում է, ես երեխա չեմ, որ դայակ ունենամ:

ԵՂԻՍԱԲԵԹ. (Գրգռվելով): Բարկանում է բարկանում: Շատ քաջն է: Իսկ եթե մի բան պատահի, պատասխանատուն ես եմ մարդու մոտ: Գնա, տուն կանչիր. ասա ճաշի ժամանակ է:

ՄԵԼԱՆԻԱ. Իսկույն: (Վերմակը, գիրքը և լրագիրները տանում է պատշգամբով և անմիջապես վերադառնում է, գլխին մի շալ: Դուրս է գալիս ձախ կողմի թփերի միջով):

ԵՂԻՍԱԲԵԹ. (Ինքն իրան): Ես էլ կարող եմ ուրիշ սկեսուրների պես պարծե՛նալ, որ հարս ունիմ: Աչքս լույս: (Բարկացած համարակալի հատիկները խառնում է և հաշիվը նորից սկսում): Թյո՛ւ:

ՏԵՍԻԼ 3

ԵՂԻՍԱԲԵԹ և ՎԻՐԳԻՆԵ

ՎԻՐԳԻՆԵ. (Երևում է պատշգամբի վրա այն միջոցին, երբ Եղիսաբեթը պատվիրում է Մելանիային Արմենուհուն կանչելու, այնպես որ լսում է նրա վերջին խոսքերը: Շքեղ, բայց ոչ ախորժելի ճաշակով հագնված կին է, դեմքով նման իր մորը: Խոսելու միջոցին դեմքը միշտ արտահայտում է նախանձ ու չարություն): Չեմ հասկանում ինչո՞ւ ես ուղարկում նրա հետևից: (Իջնում է սանդուղքով): Կարծեմ, ինքը պետք է առանց ասելու իմանա իր պարտականությունը: (Նստում է մոր մոտ):

ԵՂԻՍԱԲԵԹ. Դե որ չի իմանում, ինչ անեմ: (Միշտ զբաղված է հաշիվներով: Մերթ ընդ մերթ մատիտով ինչ-որ նշանակում է թերթերի վրա):

ՎԻՐԳԻՆԵ. Իհարկե, այնքան ազատություն եք տվել, որ երե է առել:

ԵՂԻՍԱԲԵԹ. Է՛է, Վիրգինե, կինն իր ծնողների տանը պիտի կրթված լինի՝ թե չէ պսակվելուց հետո դժվար է նրան փոխել: Արմենուհու հայրն ասում է. «Ես իմ աղջկան ազատ եմ մեծացրել»: Լավ, տեսնենք վերջն ուր պիտի տանի նրան ազատությունը:

ՎԻՐԳԻՆԵ. Նա գիմնազիայումն էլ այդպես էր, դասընկերս է եղել, միշտ ինքնագլուխ, գոռոզ, ինքնահավան: Ես աչքով աչք չունեի նրան տեսնելու: Ինքն էլ գիտեր և ատում էր ինձ: Քանի-քանի անգամ երեսիս ինձ անվանել է չար, նախանձոտ, ինտրիգան: Այժմ էլ նա ինձ արհամարհում է: Օ՛օ, կտեսնեք, նա ձեր գլխին մի փորձանք կբերի:

ԵՂԻՍԱԲԵԹ. (Հաշիվը շփոթելով): Էհ, հաշիվներս խառնեցիր:

ՎԻՐԳԻՆԵ. (Հափշտակված չի լսում իր մոր խոսքերը): Տասն օր է ամուսնուս հետ այստեղ հյուր եմ, մի անգամ էլ հետս կարգին չի նստել ու զրույց արել: Գիտեմ, նա իր մտքումն ինձ արժանի չի համարում: Անկիրթ ենք, իհարկե, նրա նման դաշնամուր նվագել չգիտենք և ոչ էլ պոլկովնիկի աղջիկ ենք: Ա՛հ, քիչ է մնում նախանձից սիրտս տրաքի, երբ մտածում եմ, թե ով է ուտում հորս թողած

ու եղբորս վաստակած փողերը: Մայրի՛կ, լավ պահիր նրա կապը, լավ պահիր, թե չէ՝ մի օր կփոշմանես: (Վեր է կենում):

ԵՂԻՍԱԲԵԹ. Լա՛վ, քիչ գրգռիր ինձ նրա դեմ. առանց այդ էլ չեմ սիրում: (Վեր է կենում, համարակալի հատիկները խառնելով): Ա՛հ չթողեցիր խոհարարի հաշիվները ստուգել: (Տալիս է համարակալն ու թուղթը Վիրգինեին): Տա՛ր իմ սենյակը, ճաշից հետո կվերջացնեմ: Կարծեմ այս ամիս շատ չի գողացել:

ՎԻՐԳԻՆԵ. Ես իմն ասացի, մնացյալը դու գիտես: (Համարակալն ու թուղթն առնելով, գնում է պատշգամբով):

ՏԵՍԻԼ 4

ԵՂԻՍԱԲԵԹ, ԿՈՍՏԱՆԴԻՆ և ՍՏԵՓԱՆ

ԿՈՍՏԱՆԴԻՆ. (Գալիս է խորքի ցանկապատի դռնակով: Ամրակազմ, առողջ դեմքով տղամարդ է: Երեսը սափրած է: Հագած է մուգ գույնի վեստոն պանթալոն, սպիտակ միլե և ռուս պաշտոնաթող գնդապետի գդակ): Այո՛ բարեկամս. Արմենուհին կատարելապես իր մայրն է: Հանգուցյալն էլ վտանգ ասած բանը չգիտեր: Բարև, խնամի: (Բարևում է զինվորական ձևով, առանց գդակը բարձրացնելու) :

ՍՏԵՓԱՆ. (Գալիս է Կոստանդինի հետ ցանկապատի դռնակով: Կարճ խուզած միրուքով, խոհուն համակրելի դեմքով, շատ պարզ ձևերով և պարզ հագնված տղամարդ է): Մայրի՛կ, բարև:

ԵՂԻՍԱԲԵԹ. (Յուրաքանչյուրին): Բարով, բարով:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. (Շարունակելով իր խոսքը): Մեր դիվիզիայում ոչ մի սպայի կին չէր կարողանում նրա հետ մրցել ձի հեծնելում: Նա միշտ ընտրում էր ամենակատաղի ձին և վարում էր նրան ինչպես առաջնակարգ կավալերիստ: Ա՛խ, ընտիր կին էր նա:

ՍՏԵՓԱՆ. Մայրիկ, մենք քաղցած ենք: (Նայում է իր ժամացույցին):

ԵՂԻՍԱԲԵԹ. Քանի՞ ժամն է:

ՍՏԵՓԱՆ. Երեքին կես է մնում:

ԵՂԻՍԱԲԵԹ՝. Ուրեմն, կես ժամ էլ պետք է սպասել:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. (Ստեփանին): Չգիտե՞ք, որ աշխարհը տակնուվրա լինի, երեքից առաջ մեզ ճաշ չեն տալ այս տանը:

ԵՂԻՍԱԲԵԹ. Այո՛, որդուս կարգադրությունն է:

ՍՏԵՓԱՆ. Սամսոնը ուզում է գերմանացի ձևանալ ճշտապահ:

ԳԱՐԵԳԻՆ. (Երևում է պատշգամբի վրա): Պարոն Վաղամյանը ուզում է տեսնել պարոն բժշկին:

ՍՏԵՓԱՆ. Աա, Հմայա՛կը: Հրավիրիր նրան իմ սենյակը:

ԳԱՐԵԳԻՆ. Նա պարոնի սենյակումն է:

ՍՏԵՓԱՆ. Իսկույն:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Հմայակն ո՞վ է:

ՍՏԵՓԱՆ. Իմ մոտիկ բարեկամներից մեկը: Ես նրան ծանոթացրի Սամսոնի հետ: Եկել է այցելության: Օհ՛, նա հիանալի մարդ է և տաղանդավոր ճարտարապետ: Ապրում է միշտ մայրաքաղաքում, բայց երկու ամսով եկել է այստեղ հանգստանալու և իր հայրենիքի բնությամբ սքանչանալու: (Բարձրանում է սանդուղքով և հեռանում):

ՏԵՍԻԼ 5

ԿՈՍՏԱՆԴԻՆ և ԵԴԻՍԱԲԵԹ

ԵՂԻՍԱԲԵԹ. Խնամի, մի քիչ առաջ դուք իմ փեսայի մոտ ասացիք, թե ձեր աղջիկն իր մորն է նման: Մի՞թե հանգուցյալն էլ իմ հարսի պես է եղել:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. (Ծխախոտ է վառում): Այո՛, ի՞նչ եք կամենում ասել դրանով: (Նստում է սեղանից հեռու գտնվող աթոռներից մեկի վրա և ոտը ոտի վրա ձգում):

ԵՂԻՍԱԲԵԹ. Այն եմ ուզում ասել, պատվելի խնամի, որ վերջապես ժամանակն է ձեր աղջկան բան հասկացնելու:

ԿԱՍՏԱՆԴԻՆ. (Անփույթ, ծխախոտի ծուխը գլխից վեր բաց թողնելով): Իմ աղջիկը անհասկացող մեկը չէ, որ նրան բան հասկացնենք դուք կամ ես:

ԵՂԻՍԱԲԵԹ. Ով է ասում, բայց նրա արածն էլ խելոքություն չէ: Նա դեռ չգիտե, որ բամբասանքն օձ է, չի իմանում անմեղին է կծում, թե մեղավորին:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Հետո՞:

ԵՂԻՍԱԲԵԹ. Ինչո՞ւ է նա ամեն օր մեն-մենակ թափառում անտառներում, դաշտերում կամ ժայռերի վրա:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Ինչո՞ւ է թափառում. որովհետև ամառանոցումն է. նա չորս պատերի մեջ նստելու համար չի եկել այս գեղեցիկ վայրերը:

ԵՂԻՍԱԲԵԹ. Դու՛ք չե՞ք վախենում:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Ինչի՞ց:

ԵՂԻՍԱԲԵԹ. Ով գիտե, հազար ու մի տեսակ մարդ կա:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. (Հանգիստ): Իմ աղջկան ոչ ոք չի համարձակվիլ մի խոսք անգամ ասել:

ԵՂԻՍԱԲԵԹ, (Հեգնաբար): Այո՛, կվախենան, կասեն հայրը գնդապետ է, մայրը իշխանական ցեղից:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. (Հեգնությամբ): Տիկի՛ն, դուք շատ եք սիրում Արմենուհու ծնողների տիտղոսները հիշել, այդ ի՛նչ է նշանակում: Չլինի, թե մեզ արժանի չեք համարում Տերդ բուրժուական գերազանցությանը:

ԵՂԻՍԱԲԵԹ. Ահա այդպես եք խոսում միշտ, որ ձեր աղջիկը կարծում է, թե ոչ մի պակասություն չունի:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Կկամենայի իմանալ, ինչ պակասություն եք տեսել Արմենուհու մեջ:

ԵՂԻՍԱԲԵԹ. Նա չգիտե իրանից մեծերին հարգել:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Մեծերին հարգելն իմ աղջիկն օրորոցից է սովորել, եթե, իհարկե, մեծերն էլ գիտեն նրան հարգել:

Հետո՞ :

ԵՂԻՍԱԲԵԹ. Գոռոզ է:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Ո՛չ, խնամի, հպարտ է գոռոզների վերաբերմամբ: Շարունակեցե՛ք:

ԵՂԻՍԱԲԵԹ. Ինքնահավան է:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Դեռ երեկ ձեր փեսան, Ստեփանը, պախարկում էր նրա անսահման համեստությունը:

ԵՂԻՍԱԲԵԹ. Տնտեսությամբ չի հետաքրքրվում:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Ալադյանի կինը կարիք չունի խոհանոց մտնելու: ՈՒրի՞շ:

ԵՂԻՍԱԲԵԹ. Նա ինձ չի հնազանդվում: Իմ ազգականներին չի սիրում:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Սկեսուրների իշխանության դարն անցել է: Գալով ձեր ազգականներին, մեր մեջ ասած, մի սիրելու պտուղներ չեն: (Վեր է կենում): Է՛հ, տիկին, դուք չգիտեք վարվել ձեր հարսի հետ: Ես տասն անգամ ասել եմ, թե Արմենուհին այն կանանցից չէ, որոնց ընկճում են խստության և սպառնալիքների միջոցով: Նա ունի քնքուշ սիրտ, բայց ամուր կամք, ինչպես իր հանգուցյալ մայրն էր: Նրան միայն սիրով և փաղաքշանքով կարելի է գրավել: Այս լավ իմացեք: (Մի երկու քայլ է գնում դեպի բեմի խորքը):

ԵՂԻՍԱԲԵԹ. (Արհամարհանքով): Իհարկե, ոսկու և արծաթի մեջ է մեծացել:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. (Կանգ առնելով): Տիկին, քիչ զոռոզացեք ձեր ոսկի և արծաթով: Եթե իմ աղջիկը համաձայնեց այս տունը մտնել, չկարծեք, թե ձեր հարստությամբ հափշտակվեց: Արմենուհին ձեր ասած կանանցից չէ: Ոչ, ո՛չ, ո՛չ:

ՏԵՍԻԼ 6

ՆՈՒՅՆՔ և ՄԵԼԱՆԻԱ

ՄԵԼԱՆԻԱ. (Գալիս է ձախ կողմից): Տիկին, ես նրան ոչ մի տեղ չգտա:

ԵՂԻՍԱԲԵԹ. (Կատաղելով): Ա՛յ, տեսնո՞ւմ եք. տանը հյուրեր, իսկ տանտիկնոջը փնտրում են սարերում, ձորերում ու չեն գանում: Մի օր նա իր գլուխը կջարդի, կտեսնեք: (Գնում է պատշգամբով):

ՏԵՍԻԼ 7

ԿՈՍՏԱՆԴԻՆ և ՄԵԼԱՆԻԱ

ՄԵԼԱՆԻԱ. (Նայելով Եղիսաբեթի հետևից երկյուղով: Ցածր ձայնով): Ես տեսա երիտասարդ տիկնոջը: Գետակի ափում նստած, քարեր էր գցում ջրի մեջ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Հապա ինչո՞ւ ասացիք այդ պառավին, թե չգտաք:

ՄԵԼԱՆԻԱ. Երիտասարդ տիկինն այդպես պատվիրեց: Նա բարկացավ, երբ ասացի, թե սկեսուրն է ինձ ուղարկել իրան տուն կանչելու: Ահա գալիս է ինքը:

ՏԵՍԻԼ 8

ՆՈՒՅՆՔ և ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՐՄԵՆՈՒՀԻ. (Գալիս է ձախ կողմից: Սիրուն, համակրելի, համարձակ դեմքով, գեղեցիկ կազմվածքով կին է, բաց շագանակագույն թանձր մազերով: Հագած է ամառային շրջազգեստ, դեղնագույն կոշիկներ: Գլխին գցած է մի սպիտակ շալ, ձեռքում բռնած է մի փունջ վայրի ծաղիկներից և մի բարակ, սև,

երկայն ճյուղավոր ձեռնափայտ, ալպենաշտոկ): Հայրիկ, բարև, այսօր քեզ եմ տեսել: (Համբուրվում է Կոստանդինի հետ):

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Այդ ի՞նչ լավ փունջ ես կազմել:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Հիանալի է, այնպես չէ : Բարձր տեղերում եմ ժողովել այս ծաղիկները: Շատ նուրբ հոտ ունին: Հասա, տես: (Փունջը մոտեցնում է Կոստանդինի դեմքին): Զգո՞ւմ ես: Մելանիա, խնդրեմ բերեք մի ծաղկաման:

ՄԵԼԱՆԻԱ. Իսկույն: (Շտապով գնում է կողմով և անմիջապէս վերադառնում է առանց շալի, ձեռքում մի ծաղկաման) :

ԱՐՄԵՆՈՒՀԻ. (Փունջը պահելով, ձեռնափայտը հենում աթոռներից մեկին ու գալիս է առաջ): Հայրիկ, կարծես, դու տխուր ես և մի քիչ էլ հուզված: Ի՞նչ է պատահել:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Սկեսուրդ արյունս պղտորեց:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Դարձյա՛լ: Ա՛հ, այդ անտանելի է, վերջապես: (Մելանիային): Դրե՛ք ծաղկամանը սեղանի վրա: (Փունջը տեղավորում է ծաղկամանի մեջ): Այսպես, տես, հայրիկ, ինչպես գեղեցկացնում է սեղանը: (Շալը գլխից վերցնելով, տալիս է Մելանիային): Երեխան տա՞նն է:

ՄԵԼԱՆԻԱ. Ոչ: Դայակը նրան դուրս տարավ: (Շալն առնելով, գնում է պատշգամբով):

ՏԵՍԻԼ 9

ԱՐՄԵՆՈՒՀԻ և ԿՈՍՏԱՆԴԻՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ի՞նչ էր ասում սկեսուրս, հայրիկ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Դե՛հ, չարժե ուշադրություն դարձնել: Մեկ ականջով լսեցի, մյուսով բաց թողի:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Այո՛, չարժե, իհարկե, բայց, դժբախտաբար, այդ կինն իմ կյանքում մեծ դեր է խաղում: Անշուշտ, նա գանգատվում էր իմ դեմ: Անհնազանդ եմ, մեծերին չեմ հարգում, ամբողջ օրը կամ նվագում եմ ու կարդում, կամ զբոսնում: Օհ, միշտ միևնույն երգը անփոփոխ, ձանձրալի: (Նստում է):

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Չար է այդ կինը, Արմենուհի, չար է:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ոչ, հայրիկ, չար չէ, այլ բռնակալ: Նա կարծում է, որ, լինելով իմ ամուսնու մայրը, իմ գլխի տերն է: Նա մի տեսակ սուրբ պարտականություն է համարում ինձ կրթել: Եվ ի՜նչպես: Փափագում է, որ ես, առավոտը զարթնելով, ձեռներս կրծքիս դրած, սպասեմ նրա հրամաններին, ինչպես ինքն է արել մի ժամանակ իր սկեսրի առաջ: Այս չէ միայն, նա խառնվում է իմ և Սամսոնի հարաբերությունների մեջ, ձգտում է իշխել իմ մտքի, զգացումների և ճաշակի վրա: Ահա այս մեկն ես տանել չեմ կարողանում, և նա կատաղում է: Հայրիկ, սկզբից եթե մենք իրար չենք սիրել: (Վեր է կենում):

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Պատճա՞ռը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Պատճառը, պարզ է: Այդ կինը վճռած է եղել իր որդուն ամուսնացնել մի ուրիշի հետ: Ո՛վ է հետաքրքրական չէ, բայց իր ճաշակի մեկն է: Սամսոնը գերադասել է ինձ: Եվ ես այս տունն եմ մտել արդեն իմ դեմ ունենալով որոշ թշնամություն: Ավելացրու և այն, որ Վիրգինեն, Սամսոնի քույրը, ինձ ատում է դեռ գիմնազիայից սկսած:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Նրա՞ն ինչ ես արել, որ ատում է:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ոչինչ, հայրի՛կ, հավատա: Միայն հետը վարվել չեմ կարողանում:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Պետք է կարողանաս վարվել մի կերպ, ինչ արած:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ախ, հայրի՛կ, հեշտ է այդ ասել, բայց ի՜նչպես: Դու գիտես, որ ես զզվում եմ բամբասանքից: Իսկ Վիրգինեն միայն նրանով է շնչում ու ապրում: Դեռ գիմնազիայում նա սիրում էր ամենքին չարախոսել, նույնիսկ մեր ընկերուհիների ծնողներին: Ոչ, հայրիկ, ես չգիտեմ ինչ պես նրա հետ ժամանակ

անցկացնեմ, ինչի մասին խոսեմ: Ինչ որ ինձ է զբաղեցնում, նրան ձանձրացնում է, և հակառակը: Նա սիրում է միշտ սրան պարսավել, նրան զրպարտել: Երեկ, օրինակ, նա անբարոյական անվանեց իմ մոտ մի կնոջ, որին ես սիրում եմ և հարգում: Նա լրտեսում է ամենքին և ամենից ավելի ինձ: Եվ շարունակ իր մորը լարում է իմ դեմ: (Քայլում է):

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Բայց ամուսի՞նդ ինչ է ասում: Չէ՞ որ նա շատ էլ տգետ մարդ չէ: Ինչո՞ւ է թույլ տալիս իր մորն ու քրոջը քեզ վրա իրավունք բանացնելու:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. (Ձեռքով մի տխուր շարժումն անելով): Ա՛հ, ամուսինս: Նա ժամանակ չունի ինձանով հետաքրքրվելու, նա զբաղված է իր գործերով: (Երեսը դարձնում է նորից իր այլայլմունքը թաքցնելու համար):

ԿՈՍՏԱՆԴԻՆ. (Զգացել է Արմենուհու այլայլվելը: Լռություն: Մոտենում է): Արմենուհի, ինչո՞ւ երեսդ դարձրիր ինձանից: Ի՞նչ ունիս, ասա, մի՛ քաշվիր:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. (Ուղղելով իրան): Թողնե՛նք, հայրիկ, թողնենք: Այս բոլորը հետաքրքրական չէ քեզ համար:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Ես քո ձայնի մեջ զգացի ինչ-որ դառնություն: (Բռնում է Արմենուհու ձեռը): Աչքերիս նայիր...

ԱՐՄԵՆՈՒՀԻ. (Ձեռն ազատելով Կոստանդինի ձեռից): Ոչինչ, հայրիկ, իմ ամուսինս վատ մարդ չէ... ես գոհ եմ: Ահա գալիս են նրանք: Լռե՛նք:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Դու ինձ խաբել չես կարող, դու մի բան ունիս սրտումդ….

ՏԵՍԻԼ 10

ՆՈՒՅՆՔ, ՍԱՄՍՈՆ, ՀՄԱՅԱԿ, ՍՏԵՓԱՆ և ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄՅԱՆ

ՍԱՄՍՈՆ. (Գալիս է պատշգամբից: Միջահասակ ամրակազմ մարդ է, տափակ ճակատով, թուխ դեմքով: Սև միրուքը խուզած է կարճ, բարակ ընչացքը հազիվ ծածկում է ամուր սեղմված բարակ շուրթը: Հոնքերը միշտ կնճռած են: Անտարբեր, եսամոլ, շահասեր մարդու տիպար: Սովորության ունի մի ձեռը

պահել պանթալոնի գրպանում, մյուսով խաղալ ժամացույցի շղթայի հետ):

ՀՄԱՅԱԿ. (Գալիս է պատշգամբից Սամսոնի հետ: Պարզ, համակրելի դեմքով, բաց գույնի մազերով տղամարդ է: Հագնված է ճաշակով: Ձևերը մեղմ են և շատ կիրթ: Ձեռում բռնած է կակուղ գլխարկ):

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄՅԱՆ. (Գալիս է պատշգամբից, Սամսոնի հետևից Ստեփանի հետ: Ալեխառը, կարճ միրուքով, փոքրիկ խորամանկ աչքերով, դեմքի շողոքորթ արտահայտությամբ տղամարդ է: Հագած է տձև սյուրտուկ, սպիտակ ժիլե, որ բավական մաշված է, ծալած օձիքով շապիկ, սև տափակ փողկապ, լայն պանթալոն: Ձևերը ստրկական):

ՍԱՄՍՈՆ. (Իջնելով պարտեզ): Ես հավանեցի ձեր առաջարկած ոճը իմ նոր տան համար: Կազմեցեք պլանն այդ ոճով, եթե ժամանակ ունիք: Խնդրեմ ծանոթանաք, կինս, աներս:

ՀՄԱՅԱԿ. Վառլամյա՛ն: (Նախ ձեռ է տալիս Արմենուհուն, ապա Կոստանդինին):

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄՅԱՆ. Այո, իմ կարծիքով էլ պարոն ճարտարապետի առաջարկած ոճը լավն է, թեև ուրիշ լավ ոճեր էլ կան: (Իբրև տնացի, չի բարևում Արմենուհուն ու Կոստանդինին):

ՍՏԵՓԱՆ. (Ծաղրելով): Այո, պատվելի քեռի, ինչպես օրինակ դուք լավ վարժապետ եք եղել, թեև կան ուրիշ լավ վարժապետներ էլ. կամ ես բժիշկ եմ, թեև ուրիշ բժիշկներ էլ կան:

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄՅԱՆ. Ինձ թվում է, սիրելի փեսա, որ դուք մի քիչ ծաղրեցիք ինձ, թեև այդ չի կարելի ծաղր համարել :

ՏԵՍԻԼ 11

ՆՈՒՅՆՔ, ԵՂԻՍԱԲԵԹ և ՎԻՐԳԻՆԵ

ԵՂԻՍԱԲԵԹ. (Երևում է պատշգամբի վրա):

ՎԻՐԳԻՆԵ. (Երևում է պատշգամբի վրա Եղիսաբենթի հետ); ՍԱՄՍՈՆ. Ահա՛ և իմ մայրն ու քույրը:

ՀՄԱՅԱԿ. (Որ առանձին խոսում էր Արմենուհու հետ, հեռվից գլուխ տալով Եղիսաբեթին ու Վիրգինեին, մոտենում է և ձեռ է տալիս):

ՎԻՐԳԻՆԵ. (Երևում է թե չէ, աչքերով փնտրում է Արմենուհուն և տեսնելով նրան Հմայակի հետ խոսելիս, դժկամության շարժումն է անում: Բարևում է Հմայակին սառը):

ԵՂԻՍԱԲԵԹ. Կարող եք ճաշի նստել: (Նստում է սեղանի մի ծայրում):

ԱՄԵՆՔԸ. (Նստում են):

ԱՐՄԵՆՈՒՀԻ. (Նստում է սեղանի հակառակ ծայրում, հրավիրելով Հմայակին իր մոտ նստել):

ՎԻՐԳԻՆԵ. (Այնպես է նստում, որ կարողանա դիտել Արմենուհուն և Հմայակին):

ԳԱՐԵԳԻՆ. (Կերակուր է բաժանում):

ՄԵԼԱՆԻԱ. (Օգնում է Գարեգինին):

ՍԱՄՍՈՆ. (Անձեռոցիկը կրծքին կապելով): Այդ ի՞նչ փունջ է:

ԿՈՏԱՆԴԻՆ. Արմենուհին է կազմել, (Սկսում է ուտել):

ՍԱՄՍՈՆ. (Արմենուհուն): Ասա, դու էլի անտառո՞ւմն ես եղել. (Սկսում է ուտել):

ԱՐՄԵՆՈՒՀԻ. (Կերակուր առաջարկելով Հմայակին): Ո՛չ, լեռն էի բարձրացել:

ՍԱՄՍՈՆ. Երեխայությո՛ւն: Չե՞ս մտածում, որ կարող է փորձանք պատահել:

ԵՂԻՍԱԲԵԹ. Կարծես մեր պարտեզում ծաղիկներ չկան, որ լեռներն է վազում:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ես գերադասում եմ վայրի ծաղիկները:

ՎԻՐԳԻՆԵ. Որոնք բոլորովին հոտ չունին:

ՀՄԱՅԱԿ. Տիկին, մի՞թե չեք զգում նրանց բուրմունքը: (Ռիտում է քիչ դանդաղ):

ՎԻՐԳԻՆԵ. (Կոշտ): Իհարկե, չեմ զգում:

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄՅԱՆ. Ծաղկի հոտը կարելի է զգալ և չզգալ, կախված է տրամադրությունից: (Ուտում է ախորժակով): Թեև տրամադրություն ասված բանն էլ վիճելի է:

ՍՏԵՓԱՆ. Երևելի՛ փիլիսոփայություն:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Պարոննե՛ր, այսօր եղանակը բացառապես գեղեցիկ է, չէի՞ք կամենա, արդյոք ճաշից հետո խմբովին մի թեթև զբոսանք կատարենք:

ԵՂԻՍԱԲԵԹ. Էլի՞ զբոսանք:

ՎԻՐԳԻՆԵ. (Մեկուսի): Ցնդվել է:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ոչ հեռու, մերձակա դաշտը: Ես ձայներ եմ ժողովում: Ո՞վ է ցանկանում:

ՀՄԱՅԱԿ. Ես մեծ ուրախությամբ :

ԵՂԻՍԱԲԵԹ. Ինձ միջից դուրս բերեք, պառավ կին եմ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Վիրգինե, դո՞ւ:

ՎԻՐԳԻՆԵ. (Կոշտ): Չեմ ուզում:

ՍԱՄՍՈՆ. Իսկ ես չեմ կարող:

ՍՏԵՓԱՆ. Ես կարող եմ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Ես էլ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Երեք ձայն երեքի դեմ:

ՍՏԵՓԱՆ. Հարցը վճռում է քեռին:

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄՅԱՆ. (Նեղ ընկած): Ճաշից հետո զբոսանքը շատ լավ բան է, բայց հանգստանալն էլ շատ լավ բան է, թեև կարելի է չհանգստանալ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ուրեմն, չե՞ք կամենում:

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄՅԱՆ. Ես ինչպե՛ս կարող եմ ձեր առաջարկությունը չընդունել, բայց մյուս կողմից... պետք է ասած, որ...

ՍՏԵՓԱՆ. Այո՞, վերջապես, թե՞ ոչ:

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄՅԱՆ. Նայելով հանգամանքներին…

ՍՏԵՓԱՆ. Ուրեմն, թե՛ այո է, թե ո՛չ: Մի խոսքով կատարելապես Սողոմ քեռի:

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄՅԱՆ. Բժի՛շկ, եթե կամենամ, այդ խոսքերից կարող եմ վիրավորվել, թեև վիրավորական բան չկա:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. (Նկատել է երկու թափառական երաժիշտներ, որոնք անցնում են հեռու փողոցով): Օօ՛, թափառական երաժիշտներ: Գարեգին, կանչեցեք նրանց:

ԳԱՐԵԳԻՆ. (Շտապով մոտենում է խորքի ցանկապատին և նշան է անում երաժիշտներին մոտենալու):

ՏԵՍԻԼ 12

ՆՈՒՅՆՔ, և թափառական երաժիշտներ

ԵՐԿՈՒ ԹԱՓԱՌԱԿԱՆ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ. (Մոտենում են ցանկապատին պատրաստվում են նվագելու):

ՍԱՄՍՈՆ. (Ձանձրույթով): Արմենուհի, թող անցնեն գնան:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Օ՜օ, ո՛չ, այս մեկն ինձ ներիր: Ես շատ եմ սիրում թափառական երաժիշտներին: (Դեպի երաժիշտները): Մի հին եղանակ նվագեցեք:

ԵՐԿՈՒ ԹԱՓԱՌԱԿԱՆ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ. (Նվագում են՝ մեկը քյամանչա, մյուսը թառ):

ՍԱՄՍՈՆ. Գոնե չերգեին:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Դրանք չեն երգում:

ՍԱՄՍՈՆ. (Հմայակին): Երևակայեցեք, պարոն Վառլամյան, իմ կնոջ ճաշակը: Երեք անգամ ինձ հետ ճանապարհորդել է Եվրոպայում, տեսել է բոլոր մեծ թատրոնները, լսել է ամենաընտիր երաժիշտներին. Բայրեռթում հիացել է Վագների օպերաներով, Պարիզում Կոլոնի և Լամուրեի օրկեստրներով. Հռովմում Կարուզոյի ձայնով և դարձյալ ախորժում է այդ վայրենի երաժշտությունից:

ՀՄԱՅԱԿ. Ներեցե՛ք, պարոն Սամսոն, ես ճարտարապետ եմ, հիանում եմ Եվրոպական հին և նոր ոճերով. բայց այս ինձ չի խանգարում սիրել և իմ մայրենի երկրի հին վանքերի ճարտարապետությունը: Այն ունի իր առանձին հմայքը:

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄՅԱՆ. Բայց եթե դուք լսեիք Արմենուհու դաշնամուր նվագելը, ամեն բանն կմոռանայիք:

ՍՏԵՓԱՆ. Ա՜ա, վերջապես քեռին մի բան գտավ, որի մասին կարողանում է ասել «այո» և ոչ, թե «և այո և ոչ»:

ՀՄԱՅԱԿ. (Արմենուհուն): Տիկին, ես հուսով եմ, որ անձամբ կվայելեմ ձեր նվագման հաճույքը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Պայմանով, որ շատ էլ չհավատաք քեռու գովասանքին: Ինձ համար ավելի բարձր են այդ տարրական հնչյունները: Լսեցեք՝ որքան թախիծ, դառը վիշտ, ողբ մի տառապող սրտի:

ՎԻՐԳԻՆԵ. Ես ոչինչ չեմ զգում:

ՍԱՄՍՈՆ. Մուրճի հարվածներ են տալիս մարդու ներվերին:

ՀՄԱՅԱԿ. Դժվարանում եմ հավատալ, որ այդպես լինի: Չէ՞ որ մանկությունից այդ հնչյուններով է կրթվել ձեր լսելիքը:

ՍՏԵՓԱՆ. Իհարկե. բայց սովորություն է դարձել մեզանում պարսավել բոլորը, ինչ որ մայրենի է: Դա համարվում է եվրոպականություն: Սնոբի՛զմ...

ՍՈՂՈՄ ԱՈՂՈՄՅԱՆ. Երաժշտությունն այնպիսի բան է, որ կարելի է զգալ և չզգալ, նայելով տրամադրությանը:

ՍՏԵՓԱՆ. Կեցցե՛ք, քեռի, դարձյալ մի խոր փիլիսոփայական գաղափար արտահայտեցիք: Ձեր կենացը... Բաժակը զարկում է Սողոմ Սողոմյանի բաժակին և խմում է):

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Մելանիա՛, վերցրեք պարոնից երեք ռուբլի և տվեք երաժիշտներին: ԵՂԻՍԱԲԵԹ. (Զայրանալով): Երեք ռուբլի՞: Գժվե՞լ ես, ի՞նչ է: Դա էլ թատրոն չէ, որ ամեն անգամ ութ ռուբլի ծախսեք: (Սամսոնին): Տասը կոպեկն էլ շատ է:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. (Վշտացած): Հայրի՛կ, տուր նրանց երեք ռուբլի:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. Աչքիս վրա: (Ձեռքը տանելով գրպանը): Մեծ բան չէ:

ՎԻՐԳԻՆԵ. (Մեկուսի): Շատ ես մեծ-մեծ կոտրտում, տեսնենք վերջդ ի՛նչ պիտի լինի:

ՍԱՄՍՈՆ. (Կոստանդինին): Ներեցե՛ք, իմ հյուրերն իմ տանն իրավունք չունին փող ծախսելու: (Տալով Մելանիային մի ռուբլի): Տուր այս մի ռուբլին նրանց, թող կորչեն:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Մելանիա, շնորհակալություն հայտնեցեք նրանց: Այդ ցնցոտիների տակ մարդկային սիրտ է բաբախում:

ՄԵԼԱՆԻԱ. (Դրամը տալիս է երաժիշտներին):

ԵՐԱԺԻՇՏՆԵՐ. (Դադարում են նվագել, գլուխ են տալիս խոնարհ և հեռանում են):

ՍՏԵՓԱՆ. Մայրիկ, կարելի՞ է վեր կենալ, (Արմենուհուն) : Տիկի՞ն:

ԵՂԻՍԱԲԵԹ. Ճաշը վերջացել է: (Վեր է կենում):

ԱՐՄԵՆՈՒՀԻ. (Գլխով համաձայնության նշան է անում Ստեփանին և վեր կենում):

ԱՄԵՆՔԸ.(Վեր են կենում):

ԳԱՐԵԳԻՆ.

ՄԵԼԱՆԻՍ. (Սկսում են սեղանը ժողովել):

ՍՏԵՓԱՆ. (Կոստանդինին): Կամենաք, մի քիչ նարդի խաղանք պատշգամբի վրա:

ԿՈՍՏԱՆԴԻՆ. (Ծխախոտը վառելով): Իսկ զբոսա՞նքը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Չկայացավ, հայրիկ: (Սկսում է Հմայակի հետ զրույց անել):

ԿՈՍՏԱՆԴԻՆ. (Ստեփանին): Գնա՛նք: (Բարձրանում է պատշգամբը):

ՍՏԵՓԱՆ. (Կոստանդինին հետևելով): Գարեգին, նարդին բերեք:

ԳԱՐԵԳԻՆ. (Գնում է աջ, սենյակից շտապելով մի նարդի է դուրս բերում և դնում պատշգամբի երկրորդ ծայրում):

ԿՈՍՏԱՆԴԻՆ.

ՍՏԵՓԱՆ (Սկսում ենխաղալ): .

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄՅԱՆ. (Եղիսաբեթին): Քույր, կարո՞ղ ես ինձ մի բաժակ սուրճ տալ, թեև սուրճը վնասակար է ինձ համար:

ԵՂԻՍԱԲԵԹ. Գնա՛նք. (Քայլերն ուղղում է դեպի պատշգամբ):

ՎԻՐԳԻՆԵ. (Աչքերով միշտ հետևել է Արմենուհուն և Հմայակին: Եղիսաբեթին առանձին): Տես է, քչփչում են:

ԵՂԻՍԱԲԵԹ. (Մի արագ թշնամական հայացք ձգելով Արմենուհու կողմը): Ա՛հ, քանի գնում, այնքան ավելի եմ ատում: Երեք ռուբլի մուրացկաններին, տեր աստված: (Գնում է):

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄՅԱՆ. (Հետևում է Եղիսաբեթին):

ՎԻՐԳԻՆԵ. (Մի չար հայացք ևս ձգելով Արմենուհու և Հմայակի վրա, հետևում է Եղիսաբեթին):

ՍԱՄՍՈՆ. (Հմայակին): Ես կկամենայի ձեզ հետ ավելի երկար խոսել իմ նոր տան պլանի մասին: Պետք է ասած, որ ձեր առաջադրած ոճը քանի գնում, ավելի է գրավում ինձ:

ՀՄԱՅԱԿ. Խնդրե՛մ: Ես ձեր տրամադրության տակ եմ:

ՍԱՄՍՈՆ. Գնանք իմ սենյակը: (Դիմում է դեպի պատշգամբ):

ՀՄԱՅԱԿ. (Բարձրանամ է պատշգամբ և, մինչև Սամսոնն ու Արմենուհին խոսում են, կանգնում է Կոստանդինի և Ստեփանի քով և նայում է նրանց խաղին):

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Սամսո՛ն, մի րոպե:

ՍԱՄՍՈՆ. (Հետ է դառնում):

ՏԵՍԻԼ 13

ԱՐՄԷՆՈՒՀԻ և ՍԱՄՍՈՆ

ՍՐՄԵՆՈՒՀԻ. Ասա խնդրեմ, ինչո՞ւ դու միշտ խափանում ես ամեն մի զվարճություն: Կարծեմ քեզ համար դժվար չէր լինի մի երկու ժամ նվիրել ինձ:

ՍԱՄՍՈՆ. Դրա համա՞ր պահեցիր, ինձ: Է՛հ: (Ուզում է գնալ):

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Կա՛ց:

ՍԱՄՍՈՆ. (Կանգ առնելով): Ասա՛, լսում եմ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Բանը զբոսանքը չէ, Սամսոն, հասկացիր, վերջապես:

ՍԱՄՍՈՆ. Ի՞նչ է պատահել, ասա, որ հասկանամ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Վերջերս մի չար նախազգացում սկսել է ինձ հալածել: Թվում է, որ շուտով ինձ մի դժբախտություն է պատահելու: Պաշապանիր ինձ:

ՍԱՄՍՈՆ. Դատարկ բաներ են, ի՛նչ նախազգացում, ի՛նչ դժբախտություն: Մեր հասարակության մեջ երեք կին չկա քեզ նման բախտավոր:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Հավատա՞մ արդյոք:

ՍԱՄՍՈՆ. Իրավունք չունիս չհավատալու: Նայի՛ր շուրջդ, ամենքը նախանձում են քեզ: Ո՞ւմ ամուսինն ես: Սամսոն Ալադյանի. ասել է՝ ոչինչ չի պակասում քեզ, բացի պակասությունից:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Ա՛հ, եթե իմանայիր ինչ է կատարվում ահա այստեղ: (Սրտին գարկելով), այդ չէիր ասիլ: Կա մի պակասություն, որ ո՛չ քո հարստությունը կարող է լրացնել, ո՛չ մարդկանց հարգանքն ու նախանձը:

ՍԱՄՍՈՆ. Ա՞յն է:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Քո անտարբերությունն դեպի իմ հոգեկան վիճակը: Սամսո՛ն, պարզ ասա, աներկյուղ, ճի՞շտ է, որ քո գործերն են միայն քեզ խլում ինձանից:

ՍԱՄՍՈՆ. (Թեթև ցնցվում է, բայց և իսկույն ուղղում իրան): Զարմանալի հարց: Ուրիշ ես ինչո՞վ կարող եմ հափշտակվել, բացի իմ գործերից:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Իհարկե, ես էլ այդպես եմ կարծում, սակայն մի տխմար կասկած, մի ինչ-որ թերահավատություն մտել է սիրտս և ինձ տանջում է...

ՍԱՄՍՈՆ. (Ձևանում է վիրավորված): Արմենուհի՛, կարծեմ ես քեզ ոչ մի կասկածի առիթ չեմ տվել:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Լավ, մի՛ բարկանար: Երևի, ես հիմար եմ...

ՍԱՄՍՈՆ. Հիմար չես, Արմենուհի, այլ մի փոքր ներվային, և այդ առաջանում է անգործությունից: Զբաղվիր մի բանով, և կանցնի:

ԱՐՄԵՆՈՒՀԻ. Աա՜, ոչ մի զբաղմունք, ոչ մի գործ ինձ չի հետաքրքրում: Ասա՛ ինձ, Սամսոն, սիրո՞ւմ ես քո Արմենուհուն:

ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՍԱՄՍՈՆ ԱԼԱԴՅԱՆ, գործի մարդ, 37 տարեկան.

ԱՐՄԵՆՈՒՀԻ, նրա ամուսինը, 27 տարեկան.

ՀՄԱՅԱԿ ՎԱՌԼԱՄՅԱՆ, ճարտարապետ, 38 տարեկան.

ՍԻՐԱՆՈՒՅՇ, Հմայակի ամուսինը, 29 տարեկան.

ՍՏԵՓԱՆ ԳՈՒՐԳԵՆՅԱՆ, բժիշկ, Սամսոնի բարեկամ ընկերը և փեսան, 38 տարեկան.

ՎԻՐԳԻՆԵ, Ստեփանի ամուսինը, 28 տարեկան.

ԵՂԻՍԱԲԵԹ, Սամսոնի և Վիրգինեի մայրը, 57 տարեկան.

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԲԱՐԱԹՅԱՆ, Արմենուհու հայրը, պաշտոնաթող գնդապետ, 55 տարեկան.

ՍՈՂՈՄ ՍՈՂՈՄՅԱՆ, Եղիսաբեթի եղբայրը, նախկին ուսուցիչ, 48 տարեկան.

ՄԵԼԱՆԻԱ. Ալաղյանների աղախինը.

ԳԱՐԵԳԻՆ. Ալաղյանների ծառան.

ԴԱՅԱԿ. անխոս կին.

ԵՐԿՈՒ ԹԱՓԱՌԱԿԱՆ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ:

Գործողությունը կատարվում է Ալաղյանների ամառանոցում 190... թ.: